



**Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020 թ. սեպտեմբերի  
27-ին սանձազերծված պատերազմի մասնակիցների և  
հանրության հոգեբանական վերականգնման  
աշխատանքները**

**Տեղեկանք**

2021 թ.

Չեղիճակներ՝ Մարիետա Թեմուրյան  
Սառա Ղազարյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց



Սույն տեղեկանքը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ – Չայաստանի ֆինանսական աջակցությամբ: Տեղեկանքում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են, և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

## Ներածություն

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետությունը պատերազմ սանձազերծեց Արցախի Հանրապետության դեմ՝ ներգրավելով նաև վարձկանների, օգտագործելով պատերազմ վարելու արգելված միջոցներ և մեթոդներ, թիրախավորելով քաղաքացիական անձանց և օբյեկտներ: Թիրախավորվել է նաև Հայաստանի տարածքը և քաղաքացիական բնակչությունը: 44 օր տևած պատերազմը խաթարեց Արցախի և Հայաստանի քաղաքացիների բնականոն կյանքը, հազարավոր մարդիկ զոհվեցին, վիրավորումներ ստացան, հաշմանդամություն և ձեռք բերեցին, տասնյակ հազարավորներ ստիպված էին տեղահանվել իրենց բնակության մշտական վայրերից:

Համաձայն ՀՀ քննչական կոմիտեի 2021 թ. սեպտեմբերի 27-ի տեղեկության՝ «Ադրբեջանի կողմից սանձազերծված ագրեսիվ պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետությունում և ՀՀ-ում զոհված զինծառայողների և քաղաքացիական անձանց ընդհանուր թվաքանակը կազմում է 3781 անձ»<sup>1</sup>: Եթե հիմք ընդունենք Արցախի մարդու իրավունքների պաշտպանի 2021 թ. սեպտեմբերի 28-ին հրապարակված տվյալները քաղաքացիական անձանց շրջանում զոհերի թվի վերաբերյալ (80 անձ)<sup>2</sup>, ապա կարող ենք եզրակացնել, որ 2021 թ. սեպտեմբերի 28-ի դրությամբ զոհված զինծառայողների թիվը կազմում է 3701: Համաձայն ՀՀ զինդատախազության՝ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ է ստացել 9094 անձ<sup>3</sup>: Ըստ պաշտոնական տվյալների՝ 2021 թ. սեպտեմբերի 27-ի դրությամբ անհայտ է 231 զինծառայողի և 22 քաղաքացիական անձի գտնվելու վայրը<sup>4</sup>: Գերիների թիվը ոչ պաշտոնական տվյալներով մի քանի տասնյակ է<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Տեղեկատվություն՝ 44-օրյա պատերազմի հետևանքով զոհված, գտնվելու վայրն անհայտ զինծառայողների և քաղաքացիական անձանց վերաբերյալ, ՀՀ քննչական կոմիտե, 27.09.2021 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.investigative.am/news/view/44-orya-paterazm.html>

<sup>2</sup> Տե՛ս Արցախի մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական ֆեյսբուքյան էջն առ 28.09.2021 թ., հասանելի է <https://www.facebook.com/ArtsakhOmbuds/posts/1964193957081090>

<sup>3</sup> Տե՛ս Ամփոփվել են ՀՀ զինդատախազության 2020 թ. գործունեության արդյունքները և պատերազմին վերաբերող քրեական գործերով քննությունների ընթացքը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.prosecutor.am/am/mo/8096/>

<sup>4</sup> Տե՛ս Տեղեկատվություն՝ 44-օրյա պատերազմի հետևանքով զոհված, գտնվելու վայրն անհայտ զինծառայողների և քաղաքացիական անձանց վերաբերյալ, ՀՀ քննչական կոմիտե, 27.09.2021 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.investigative.am/news/view/44-orya-paterazm.html>

<sup>5</sup> Տե՛ս Վերջին տվյալներով՝ հայկական կողմից 44-օրյա պատերազմի զոհերի թիվը 3 հազար 788 է, 246 մարդ անհետ կորած է, 04.10.2021 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.azatutyun.am/a/31491629.html>

Պատերազմի անմիջական հետևանքներից են նաև հոգեբանական խնդիրներն ինչպես պատերազմի մասնակիցների և նրանց հարազատների, այնպես էլ լայն հանրության շրջանում: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ հակամարտության հետևանքները կրող բնակչության շրջանում հոգեկան խնդիրների տարածվածությունը 22.1 տոկոս է<sup>6</sup>:

ՀՀ գլխավոր դատախազության տեղեկացմամբ՝ 2016 թ. ապրիլ և 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին պատերազմական գործողությունները բացասական ազդեցություն են ունեցել մասնակիցների (զինծառայողների, կամավոր կամ պահեստազորային անձանց), նրանց ու զոհված կամ անհայտ կորած անձանց հարազատների հոգեբանական վիճակի վրա: Գրանցվել են ինքնասպանություններ և ինքնասպանության փորձեր՝ պայմանավորված չհաղթահարված հոգեբանական խնդիրներով<sup>7</sup>:

Ըստ Հայկական հոգեբուժական ասոցիացիայի նախագահ Արմեն Սողոյանի՝ հանրության լայն շրջանում իրականացված հետազոտության արդյունքները վկայում են, որ 2021 թ. մայիս-հունիս ամիսներին 2020 թ. նույն ամիսների համեմատությամբ հոգեբանական աջակցության կարիք ունեցող անձանց թիվն ավելացել է, հոգեմարմնական խանգարում ունեցող անձանց թիվը 20 տոկոսից դարձել 30<sup>8</sup>:

Համաձայն 2021 թ. սեպտեմբերին հրապարակված հետազոտության՝ Հայաստանի 16-24 տարեկան հարցված 1000 երիտասարդների 93 տոկոսը նշել է, որ անձամբ իրենք կամ իրենց շրջապատից որևէ մեկը ներգրավված է եղել 2020 թ. Արցախում ռազմական գործողություններում<sup>9</sup>: Հարցվածների 69.1 տոկոսի մոտ զգացած անհանգստությունը, տագնապը կամ դյուրագրգռվածությունը կապված է ռազմական գործողությունների հետ<sup>10</sup>:

Հայաստանը ստանձնել է հոգեկան առողջության պահպանման պարտավորություններ միջազգային փաստաթղթերով, այդ թվում՝ Տնտեսական,

---

<sup>6</sup> Հակամարտության պայմաններում հոգեկան խանգարումների տարածվածության վերաբերյալ ԱՐԿ նոր գնահատականները. պարբերական վերանայում և մեթավերլուծություն, New WHO prevalence estimates of mental disorders in conflict settings: a systematic review and meta-analysis, Lancet ամսագիր, 11.06.2019 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝

[https://www.thelancet.com/journals/lancet/article/PIIS0140-6736\(19\)30934-1/fulltext](https://www.thelancet.com/journals/lancet/article/PIIS0140-6736(19)30934-1/fulltext)

<sup>7</sup> <https://www.prosecutor.am/am/mn/8209/>

<sup>8</sup> Մոտավոր 3-6-րդ րոպեներ՝ [Մեկնարկել է հետպատերազմական հոգեբանական աջակցության անվճար պետական ծրագիրը - YouTube](#)

<sup>9</sup> Տե՛ս COVID-19-ի պայմաններում երիտասարդների հոգեկան առողջությունը, համապետական ներկայացուցչական հետազոտություն 2020-2021, հասանելի է հետևյալ հղմամբ՝

[https://yic.am/wp-content/uploads/2021/08/Report\\_-1.pdf](https://yic.am/wp-content/uploads/2021/08/Report_-1.pdf), էջ 52

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 71

սոցիալական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի միջազգային դաշնագրով, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով:

Հայաստանի ներպետական օրենսդրությունը նույնպես հոգեկան առողջության պահպանման երաշխիքներ է սահմանում: ՀՀ Սահմանադրության 85 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով առողջությունը սահմանվում է՝ «լիարժեք ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցության վիճակ, ոչ թե միայն հիվանդության կամ հաշմանդամության բացակայություն»<sup>11</sup>:

### **Հոգեբանական վերականգնման աշխատանքները**

Ռազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ հայտարարության ստորագրումից 9 օր հետո՝ 2020 թ. նոյեմբերի 18-ին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրապարակեց 44-օրյա պատերազմից հետո երկրում ստեղծված իրավիճակի հաղթահարմանն ուղղված ճանապարհային քարտեզը<sup>12</sup>, որը, ի թիվս այլնի, նախատեսում էր «պատերազմին մասնակցած անձանց և ընդհանուր առմամբ հանրության հոգեբանական ռեաբիլիտացիայի համակարգի ձևավորում»:

2021 թ. փետրվարի 4-ին ՀՀ կառավարությունը թիվ 131-Ն որոշմամբ հաստատեց Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած անձանց և հանրության հոգեբանական վերականգնման կարգը<sup>13</sup>: Որոշմամբ սահմանվեցին պետական աջակցության շրջանակներում հոգեբանական վերականգնման ծառայությունների տեսակները, թիրախ խմբերը՝

<sup>11</sup> Տե՛ս ՀՀ օրենքը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», 04.03.1996 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=153795>

<sup>12</sup> Տե՛ս Նիկոլ Փաշինյանը հրապարակեց ճանապարհային քարտեզը, 18.11.2020 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://factor.am/311170.html>

<sup>13</sup> Տե՛ս Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած անձանց և հանրության հոգեբանական վերականգնման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության թիվ 131 - Ն որոշում, 04.02.2021 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/35548/>



- 1) անհատական հոգեբանական աջակցություն և հոգեթերապիա (մինչև 8 սեանս)՝ 1-1.5 ժամ տևողությամբ.
- 2) խմբային հոգեբանական աջակցություն և հոգեթերապիա (մինչև 8 սեանս)՝ 1-1.5 ժամ տևողությամբ.
- 3) առցանց կամ հեռախոսով տրամադրվող հոգեբանական աջակցություն կամ հոգեթերապիա (մինչև 8 սեանս)՝ 1-1.5 ժամ տևողությամբ.
- 4) հոգեբանների շարժական խմբերի ծառայություն (մինչև 8 սեանս).
- 5) հոգեբանական թեժ գծի ծառայություն.
- 6) ընդհանուր հասանելիության մատչելի տեսաշարերի նկարահանում և ցուցադրում՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի գործիքների առկայությունը, այդ թվում՝ ժեստերի լեզվի թարգմանություն, հայերեն լուսագրերի առկայություն.
- 7) էլեկտրոնային հարթակների միջոցով ծառայություն



- 1) անհայտ կորած անձանց կամ ռազմագերիների ծնողները, ընտանիքի անդամները.
- 2) գերության մեջ գտնված անձինք, նրանց ընտանիքի անդամները.
- 3) ռազմական գործողությունների ընթացքում վիրավորում կամ հաշմանդամություն ստացած անձինք, նրանց ընտանիքի անդամները.
- 4) զոհված զինծառայողների կամ քաղաքացիական անձանց ընտանիքի անդամները.
- 5) ռազմական գործողություններին մասնակցած անձինք, այդ թվում՝ զորահավաքային զորակոչով ներգրավվածները և կամավորականները.
- 6) տեղահանվածները (հոգեբանական թեժ գծի աջակցությամբ).
- 7) ուղղակի մասնակցություն չունեցող անձինք (հոգեբանական թեժ գծի աջակցությամբ):

Թեև վերը նշված կարգը հաստատվեց 2021 թ. փետրվարի 4-ին, միայն ապրիլի 22-ին Կառավարության 2021 թ. թիվ 639-Ն որոշմամբ՝ Կառավարության պահուստային ֆոնդի հաշվից Արտակարգ իրավիճակների Նախարարությանը հատկացվեց 100 մլն դրամ՝ ծրագրի իրականացման համար<sup>14</sup>:

Հաջորդիվ հայտարարվեց մրցույթ, որի արդյունքում հաղթող ճանաչվեց 7 կազմակերպություն և մեկ Անհատ ձեռներեց ներառող կոնսորցիումը: Ծրագրում ներգրավվեց մոտ 60 հոգեբան<sup>15</sup>: Նախատեսվեց վեցամսյա ծրագիր, որի ֆինանսավորումը հատկացվել է 2021 թ. մայիսի 21-ին, իսկ հոգեբանական

<sup>14</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների Նախարարությանը գումար հատկացնելու, «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության թիվ 639-Ն որոշում, 22.04.2021 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151999>

<sup>15</sup> Հաղթող է ճանաչվել Սեդա Ղազարյանի անվան հոգեկան առողջության հիմնադրամը, որը գործում է «Հայկական հոգեբուժական ասոցիացիա», «Հոգեբանների հայկական գիտական միավորում», «Ամբրա» հոգեկան բարեկեցության կենտրոն» ՀԿ-ների, «Ձրո», «Էլ-Պի հոգեբանական ուսումնասիրորդատվական կենտրոն», «Ապագա» ՄՊԸ-ների և Մարիամ Մեհրաբյան Վաչագանի ԱԶ-ի միջև 2021 թ. մարտի 3-ին կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա:

աջակցության փաստացի աշխատանքներն սկսվել են միայն 2021թ. հունիսի 1-ից<sup>16</sup>:

Այսպիսով, պատերազմի ավարտից և ճանապարհային քարտեզի հրապարակումից ավելի քան կես տարի անց միայն փաստացի մեկնարկեց պատերազմի հետևանքով առաջացած հոգեբանական խնդիրներին դիմակայելու ծրագիրը, այն դեպքում, երբ ի պատասխան ՅԵԼՍԻՆԿյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի հարցմանը՝ ՀՀ վարչապետի գրասենյակը տեղեկացրել էր, որ հանրության հոգեբանական վերականգնմանն ուղղված ծրագրերի մեկնարկը նախատեսված է 2021 թ. փետրվարին:

Ծրագրով հոգեբանական վերականգնման ծառայության կարիք ունեցող անձանց հայտնաբերումն իրականացվում է պետական կառավարման համակարգի համապատասխան մարմինների աջակցությամբ, թեժ գծի ծառայության և հանրային իրազեկման միջոցով: Թեև Արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտնել է, որ այս միջոցներով իրականացվում է թիրախային խմբերի հնարավորինս ամբողջական հաշվառում, անձանց թվի, նրանց տարիքային խմբի, գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություններ Կազմակերպությանը չեն տրամադրվել:

Պատերազմի ընթացքում և 2020թ. նոյեմբերի 9-ին ստորագրված հայտարարությունից հետո մինչև հոգեբանական վերականգնման վերոնշյալ ծրագրի հաստատումը, հոգեբանական աջակցության աշխատանքներ են կատարել պետական մարմինները (Արտակարգ իրավիճակների, Պաշտպանության, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները), ինչպես նաև մասնավոր և կամավորական նախաձեռնությունները:

---

<sup>16</sup> Տե՛ս [Հոգեբանական աջակցություն՝ պատերազմից տուժածներին: Մանրամասներ Հայաստանի ԱԽՆ-ից - YouTube](#), 4:00-ից և 16:30-ից

## Արդյունքները

**Մասնակից պետությունները  
ճանաչում են յուրաքանչյուր  
մարդու ֆիզիկական և  
հոգեկան առողջության  
առավելագույնս հասանելի  
մակարդակի իրավունքը**

17

Արտակարգ իրավիճակների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ պետական ծրագրի շրջանակներում կոնսորցիումի կողմից կազմակերպվել է 5308 սեանս, հոգեբանական աջակցություն է տրամադրվել **1091** անձի (Երևանում հոգեբանական վերականգնման ծառայություն է ստացել 351, մարզերում՝ 691 և Արցախում 49 անձ):

Այսպիսով, հոգեբանական աջակցություն է ստացել Երևանի բնակչության 0.032, մարզերի բնակչության՝ 0.037 (հիմք ընդունելով 2021 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ մշտական բնակչության թվաքանակը Երևանում՝ 1 096.1, մարզերում՝ 1 870.7)<sup>18</sup> և Արցախի բնակչության 0.037 տոկոսը (հիմք ընդունելով 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ մշտական բնակչության թվաքանակը՝ 148 հազար մարդ)<sup>19</sup>:

Դիտարկենք նաև բացառապես պատերազմին անմիջապես առնչություն ունեցող անձանց տրամադրված հոգեբանական աջակցությունը և համադրենք այն զոհվածների, վիրավորում ստացած զինծառայողների և անհայտ կորած անձանց վերաբերյալ պաշտոնական թվերի հետ (3701, 9094 և 253

<sup>17</sup> Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը՝ ընդունված 16.12.1966 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18501>

<sup>18</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2021 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (ԱՐՄՍՍՍՏ), Երևան 2021, հասանելի է հետևյալ հղմամբ՝

[https://armstat.am/file/article/nasel\\_01.10.2021.pdf](https://armstat.am/file/article/nasel_01.10.2021.pdf)


<sup>19</sup> Տե՛ս Ժողովրդագրական իրավիճակը Արցախի Հանրապետությունում, Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն, 29.04.2019 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://mss.nkr.am/?p=16739>



համապատասխանաբար): Եթե հիմք ընդունենք, որ զոհված և անհայտ կորած յուրաքանչյուր անձ ունի նվազագույնը 2 հարազատ, ապա աջակցություն ստացած անձանց թիվը կազմում է նվազագույն կարիքի 6.4 տոկոսը (տե՛ս Գծապատկեր 1).

$$(3781+253)\times 2+9094=17162 \text{ անձ}$$

*Գծապատկեր 1. Հոգեբանական աջակցության նվազագույն կարիքն ու փաստացի աջակցությունը*



Նշենք, որ որևէ տվյալ պատերազմի մասնակիցների նույնիսկ մոտավոր թվի վերաբերյալ հասանելի չէ: Այսինքն, հնարավոր չէ անգամ գնահատել միայն պատերազմի անմիջական մասնակիցների՝ հոգեբանական աջակցության կարիքը, որի դեպքում աջակցության ծավալը հավանաբար ավելի փոքր տոկոս կկազմի:

Ավելին, այն անձինք, ովքեր պատերազմական գործողությունների հետ անմիջական առնչություն չեն ունեցել, սակայն հոգեբանական աջակցության կարիք ունեն, միայն թե՛ գծի միջոցով կարող են կարճ ժամանակով արտակարգ օգնություն ստանալ, բայց ոչ անվճար հոգեբանական կանոնավոր աջակցություն: Սա այն դեպքում, երբ ճանապարհային քարտեզով նախատեսվում էր հանրության հոգեբանական վերականգնումը: Նշենք նաև, որ ծրագրի թիրախ շրջանակից դուրս են մնացել բուժաշխատողները, որոնք նույնպես պատերազմի հետևանքների անմիջական կրողներն են:

Համաձայն ծրագրի համակարգողների ու իրականացնողների՝ ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2021 թ. դեկտեմբերի 25-ը, ծառայությունն ստացած անձանց թիվը հասցնել 1500-ի և կազմակերպել ընդհանուր 9000-9500 սեանս<sup>20</sup>: Նշենք, որ նույնիսկ այս ցուցանիշների դեպքում ծրագիրը չի կարող գնահատվել պատշաճ ու բավարար ծավալի կատարված:

Դիտարկումները ցույց են տալիս, որ բացակայում է նաև համագործակցությունը հոգեբուժական հաստատությունների հետ: Մասնավորապես հաստատություններն իրազեկված չեն պետական ծրագրի մասին, մինչդեռ նման համագործակցության դեպքում հաստատություններում բուժում ստացող պատերազմի մասնակիցների հետ աշխատանքը հնարավոր էր ավելի արդյունավետ կազմակերպել: Առհասարակ, համագործակցությունը ծառայություն մատուցողների, անհատական նախաձեռնությունների և կազմակերպությունների հետ, որոնք պատերազմի ընթացքում և դրանից հետո հոգեբանական աջակցության տրամադրման աշխատանքներ են կատարել, նրանց ներուժի մեկտեղումը հնարավորություն կընձեռի ավելի համակարգային և համալիր մոտեցում ցուցաբերել խնդրին:

Այս համատեքստում հարկ է փաստել, որ պատերազմի մասնակիցներին և նրանց հարազատներին հոգեբանական ծառայություններ են տրամադրում նաև **մասնավոր և կամավորական նախաձեռնությունները**, որոնք ավելի պատրաստված էին արձագանքելու նման արտակարգ իրավիճակին: Մասնավորապես նրանց ջանքերով այդ ծառայությունները հասանելի են պատերազմի սկզբից և շարունակվում են մինչ օրս<sup>21</sup>:

---

<sup>20</sup> Տե՛ս Հոգեբանական աջակցություն՝ հետպատերազմյան շրջանում. մանրամասնում է ԱԻՆ-ը, 18.10.2021 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.youtube.com/watch?v=eGqOkvXSeFE>

<sup>21</sup> Տե՛ս, օրինակ՝ «Դեպի կյանք» նախաձեռնությունը, <https://www.facebook.com/depikyank/>; Անի Ենգիբարյան/ Հոգեբանական Աջակցություն Չինվորին, <https://www.facebook.com/AniYengibaryanPsychologist/>

**«Առողջության պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են, ուղղակիորեն կամ պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցելով, ձեռնարկել համապատասխան միջոցներ, որոնք, inter alia, ուղղված կլինեն՝ 1. հնարավորին չափ վերացնելու վատառողջության պատճառները, 2. ապահովելու խորհրդատվական և կրթական հնարավորություններ՝ առողջությանը նպաստելու և առողջության հարցերում անհատի պատասխանատվությունը խրախուսելու նպատակով, 3. հնարավորին չափ կանխելու համաճարակային, տեղական (էնդեմիկ) և այլ հիվանդությունները, ինչպես նաև դժբախտ պատահարները»:**

22

Ծրագրով նախատեսված էր նաև «ընդհանուր հասանելիության մատչելի տեսաշարերի նկարահանում և ցուցադրում՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի գործիքների առկայությունը, այդ թվում՝ ժեստերի լեզվի թարգմանություն, հայերեն լուսագրերի առկայություն»<sup>23</sup>:

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունը նշված ծառայության կատարման վերաբերյալ հարցմանն ի պատասխան 2021 թ. հոկտեմբերի 8-ին տրամադրել է երեք հոլում<sup>24</sup>: Հղումները «911» հաղորդաշարի 3 թողարկումներն են յուրօրյան ալիքով: Թողարկումներն ուղղված չեն ծրագրի իրականացմանը, մասնավորապես հանրության հոգեկան առողջության վերականգնմանը, այլ, ի թիվս այլ նորությունների, ներկայացնում են տեղեկատվություն ծրագրի մասին: Ավելին, դրանք չեն պարունակում ժեստերի լեզվով թարգմանություն, հայերեն լուսագրեր և մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ընդ որում այդ հեռուստամեպորտաժների դիտումների քանակը յուրօրյան ալիքում 2021թ. նոյեմբերի 10-ի դրությամբ առավելագույնը մոտ 170 է: Կարող եմք

<sup>22</sup> Տե՛ս Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան, ընդունված 03.05.1996, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24230>

<sup>23</sup> Տե՛ս Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած անձանց և հանրության հոգեբանական վերականգնման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության թիվ 131 - Ն որոշում, 04.02.2021, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/35548/>

<sup>24</sup> Տե՛ս հեռուստամեպորտաժների հղումները՝ <https://www.youtube.com/watch?v=qu0YIOsP3W0>, <https://www.youtube.com/watch?v=SdeglG8ORuc>, <https://www.youtube.com/watch?v=3irsgPxQlzc>

արձանագրել, որ այս ուղղությամբ կատարված ջանքերն ու աշխատանքներն արդյունավետ համարվել չեն կարող:

Ինչ վերաբերում է առանձին նախարարությունների հոգեբանական աջակցման նախաձեռնություններին, ապա դրանք չեն եղել համակարգային, գնահատված կարիքի վրա հիմնված, այլ կրել են հատվածային և ժամանակավոր բնույթ: Անհասկանալի են նաև ընտրանքի չափանիշները:

**ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության հոգեբանական աջակցության բաժինն** աշխատել է տեղահանված անձանց, անհայտ կորած անձանց ընտանիքի անդամների, զոհվածների հարազատների և ընտանիքների հետ: Այնուամենայնիվ այդ աշխատանքները չեն ընդգրկել հանրապետության ամբողջ տարածքը և բոլոր թիրախ խմբերին: Նախարարությունը հոգեբանական աջակցության աշխատանքներ է կատարել Երևանում և 10 մարզերից միայն 4-ում (Կոտայք, Շիրակ, Արագածոտն և Արարատ):

**ՀՀ Պաշտպանության նախարարությունը**, համաձայն 2021 թ. նոյեմբերի 30-ին տրամադրած տեղեկության, հոգեբանական առաջին օգնության և վերականգնման աշխատանքներ է իրականացնում մասնակից զինծառայողների, պահեստազորայինների և կամավորների հետ: Հոգեբանական աջակցություն է տրամադրվել ավելի քան 6000 անձի, ինչպես նաև իրականացվել ավելի քան 1900 տնայց: Հետտրավմատիկ սթրեսային և այլ հոգեբանական խնդիրներով պատերազմական գործողություններին մասնակցած մոտ 750 զինծառայողներ ստացիոնար բուժում ու վերականգնողական ծառայություն են ստացել: Այսինքն, կան զինծառայողներ, որոնք առանց հոգեբանական աջակցություն ստանալու և վերականգնում անցնելու շարունակում են ծառայությունը, մինչդեռ պատերազմի յուրաքանչյուր մասնակցին և առաջին հերթին զինծառայության մեջ գտնվող անձանց պետք է հասանելի լինի հոգեկան վիճակի գնահատումն ու ըստ կարիքի աջակցությունը: Հարկ է նկատել, որ հոգեբանական աջակցություն ստացած մոտ 6000 անձանց և 1900 տնայցերի վերաբերյալ նույն տեղեկությունը նախարարությունը տրամադրել է նաև 2021 թ. հունվարին, ինչը ենթադրում է, որ 2021 թ. հունվարից հետո հոգեբանական աջակցություն չի տրամադրվել:

Ավելին, 2021 թ. առաջին կիսամյակում Կազմակերպություն են դիմել պատերազմական գործողություններին մասնակից զինծառայողներ, որոնք Պաշտպանության նախարարության տրամադրած հոգեբանական աջակցությունը գնահատել են անարդյունավետ, իսկ մեկ դեպքում զինծառայողին, չնայած ցուցմանը, հոգեբանի խորհրդատվություն չի տրամադրվել:

Պաշտպանության նախարարությունը երկու գրություններում էլ հղում է կատարել Արտակարգ իրավիճակների նախարարության պատվիրակած հոգեբանական վերականգնման պետական ծրագրին: Արձանագրենք, սակայն, որ ինչպես նշյալ պետական ծրագրի իրականացնողները, այնպես էլ հոգեբանական աջակցություն տրամադրող այլ նախաձեռնությունների ներկայացուցիչները փաստում են, որ իրենք չեն աշխատում ծառայության մեջ գտնվողների հետ<sup>25</sup>:

Մեզ հասնում են լուրեր, ծնողներն են դիմում, որ երեխան այնտեղ խնդիր ունի, սակայն ինձ համար սա դեռևս անլուծելի է, մեր ձեռքերը կապված են:

*«Չինժառայողների և պատերազմից տուժածների հոգեսոցիալական վերականգնման կենտրոն»  
Նախաձեռնության ղեկավար Դավիթ Գևորգյան  
09.06.2021 թ.*

**ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում,** ըստ JAMnews մեդիահարթակի, 2021 թ. հունվարի դրությամբ շուրջ մեկ ամիս գործում էր հոգեբանական աջակցության թեժ գիծ<sup>26</sup>, մինչդեռ Կազմակերպության հարցմանն ի պատասխան նախարարությունը տեղեկացրել է, որ հոգեբանական վերականգնման ծառայություններ տրամադրում է ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունը: Ըստ այդմ, կարող ենք ենթադրել, որ նախարարությունը հոգեբանական աջակցություն պատերազմի հետևանքով տուժած անձանց չի տրամադրել:

**ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝** Կազմակերպությանը տրամադրած տվյալների համաձայն՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը և Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության 20 կենտրոնները մի շարք կազմակերպությունների հետ համագործակցությամբ 2020 թ. հոկտեմբեր ամսից իրականացրել են գործողություններ պատերազմից տուժած երեխաներին

<sup>25</sup> Տե՛ս Պատերազմի մասնակիցները հաճախ մենակ են մնում սթրեսի հետ, հոդված, 09.07.2021 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://mediamax.am/am/news/society/43550/?fbclid=IwAR3kMaNOedl8RmDO583UW\\_h0b6dqObaGq3UKG7m1ZQ5wkHgjGCKPp1xoVEE](https://mediamax.am/am/news/society/43550/?fbclid=IwAR3kMaNOedl8RmDO583UW_h0b6dqObaGq3UKG7m1ZQ5wkHgjGCKPp1xoVEE)

<sup>26</sup> Տե՛ս Արցախյան երկրորդ պատերազմից հետո. հոգեբանական հաղթահարման փուլ, հոդված, 16.01.2021 թ., JAMnews մեդիահարթակ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://jam-news.net/am/ինչպես-հոգեբանորեն-հաղթահարել-պատեր/>

աջակցելու նպատակով: Թիրախում եղել են տեղահանված, անհայտ կորած անձանց, ռազմագերիների, գերության մեջ գտնված անձանց, ռազմական գործողությունների ընթացքում վիրավորում կամ հաշմանդամություն ստացած անձանց, զոհված զինծառայողների երեխաները: Գործողությունները ներառել են այդ երեխաների կրթության շարունակականության ապահովումն ու մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրումը, թեժ գծի միջոցով հոգեբանական ծառայության տրամադրումը, երեխաների հետ աշխատող մասնագետների իրազեկումն ու կրթումը:

Նախարարության տեղեկացմամբ, աջակցություն տրամադրվել է ըստ անհրաժեշտության, և աջակցություն տրամադրող Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները եռամսյակային հաշվետվություններում ներկայացրել են տվյալ ժամանակահատվածում կենտրոնի կողմից աջակցություն ստացողների ընդհանուր թիվը՝ առանց պատերազմից տուժած երեխաների վերաբերյալ առանձին վիճակագրություն ներկայացնելու:

Նշենք, որ թվային տվյալներ կազմակերպությանը չեն տրամադրվել և, ըստ այդմ, նույնիսկ ընդգրկվածության առումով հնարավոր չէ գնահատել նախարարության իրականացրած միջոցառումների արդյունավետությունը: Ավելին, վիճակագրություն վարելու նման ընդհանրական մոտեցումը հիմք է տալիս եզրահանգելու, որ պատասխանատու մարմինն իր պատվիրակած ծառայությունների կատարման ընթացքի ու արդյունքների մշտադիտարկում և/կամ գնահատում չի կատարում:

Մտահոգիչ է պատերազմի մասնակիցների և նրանց հարազատների նկատմամբ պետության վերաբերմունքը՝ նրանց տարբեր բյուրոկրատական խնդիրների առաջ կանգնեցնելը և այդպիսով արժանապատվությունը չհարգելն ու հոգեբանորեն վնասելը<sup>27</sup>:

---

<sup>27</sup> Տե՛ս Բաց նամակ իմ անունից, բոլորի համար (44-օրյա պատերազմի մասնակից Սիմոն Ջովհաննիսյան), հոդված, 03.04.2021 թ, «Հետք» ինտերնետային թերթ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://hetq.am/hy/article/129296>

Ինձ՝ վիրավորիս առաջարկում եք Մարտակերտ հասնե՛մ, որ  
թուղթ բերեմ. . . Հոգեբանական ու տարրական  
անվտանգության խնդիրների հետ միասին՝ հարց եմ տալիս  
ձեզ՝ ձեր ցինիզմի մակարդակը չե՞ք զգում. . .

Սիմոն Հովհաննիսյան

44-օրյա պատերազմի մասնակից

03. 04. 2021

Պատերազմի մասնակիցները, պայմանավորված հոգեբանական խնդիրներով, հաճախ չեն կարողանում վերադառնալ բնականոն կյանքին, աշխատել, ինչի հետևանքով ընտանիքը բախվում է նաև սոցիալական խնդիրների, իսկ պետությունը չի աջակցում նրանց, պատճառաբանելով, օրինակ, որ «գերիների վերաբերյալ որևէ ծրագիր չկա» կամ դիմումներն անպատասխան է թողնում<sup>28</sup>: Նման հիմնավորումը և մոտեցումը չեն կարող ընդունելի լինել:

***Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ սննդի, հագուստի, բնակարանի և առողջապահության ու սոցիալական անհրաժեշտ ծառայությունների իրավունք, ինչպես նաև ապահովության իրավունք՝ գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ հանգամանքներում***

29

<sup>28</sup> Տե՛ս 34 օր գերության մեջ գտնված Խաչիկը հոգեբանական սուր խնդիրներ ունի, չի աշխատում. նրան օգնություն է անհրաժեշտ, հոդված, 06.12.2021 թ., News.am լրատվական-վերլուծական գործակալություն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://news.am/arm/news/676094.html>

<sup>29</sup> Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը՝ ընդունված 10.10.1948 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ [https://www.ohchr.org/EN/UDHR/Documents/UDHR\\_Translations/arm.pdf](https://www.ohchr.org/EN/UDHR/Documents/UDHR_Translations/arm.pdf)

## Եզրահանգումները

Այսպիսով, ՀՀ իշխանությունները նախաձեռնեցին պատերազմի հոգեբանական հետևանքները թիրախավորող ծրագիր և մի շարք միջոցառումներ: Սակայն ինչպես ցույց են տալիս դիտարկումները, դրանց ծավալը բավարար չէ, իսկ արդյունքները հեռու են ծրագրի հռչակած նպատակներից:

Ամփոփելով՝ կարող ենք եզրահանգել՝

- ❖ պատերազմի հետևանքով առաջացած հոգեբանական խնդիրներին դիմակայելու ծրագիրը փաստացի մեկնարկել է պատերազմի ավարտից և ճանապարհային քարտեզի հրապարակումից ավելի քան կես տարի անց
- ❖ պատշաճ չի գնահատվել հոգեբանական աջակցության ծավալը
- ❖ իրականացված ծրագրի և պետության կողմից այլ միջոցառումների ծավալները բավարար չեն.
  - ծրագրով բավարարվել է պատերազմին անմիջապես առնչություն ունեցող անձանց նվազագույն կարիքի 6.4 տոկոսը
  - աջակցություն է ստացել Երևանի բնակչության միայն 0.032, մարզերի և Արցախի բնակչության 0.037 տոկոսը
  - պատերազմին անմիջական առնչություն չունեցած, սակայն հոգեբանական աջակցության կարիք ունեցող անձինք հոգեբանական կանոնավոր աջակցություն չեն ստացել
- ❖ Արտակարգ իրավիճակների նախարարության հոգեբանական աջակցության բաժինն աշխատել է տեղահանված անձանց, անհայտ կորած անձանց ընտանիքի անդամների, գոհվածների հարազատների և ընտանիքների հետ միայն Երևանում և 10 մարզերից 4-ում
- ❖ զինծառայության մեջ գտնվող անձինք ծրագրի և այլ նախաձեռնությունների շրջանակից դուրս են, իսկ Պաշտպանության նախարարությունը 2021 թ. հունվարից հետո հոգեբանական աջակցություն չի տրամադրել
- ❖ ծրագրի թիրախ շրջանակից դուրս են մնացել պատերազմական գործողություններին մասնակցած և պատերազմից տուժածներին բժշկական աջակցություն ցույցաբերած բուժաշխատողները
- ❖ հոգեբուժական ծառայություններ մատուցող կազմակերպությունները իրագեկված չեն պետական ծրագրի մասին, բացակայում է համագործակցությունը նրանց հետ, մինչդեռ պատերազմի մասնակիցների հետ աշխատանքը հնարավոր է ավելի արդյունավետ կազմակերպել բոլոր ծառայությունների համագործակցված աշխատանքի դեպքում
- ❖ չի տրամադրվել «ընդհանուր հասանելիության մատչելի տեսաշարերի նկարահանում և ցուցադրում՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող



անձանց համար մատչելի գործիքների առկայությունը, այդ թվում՝ ժեստերի լեզվի թարգմանություն, հայերեն լուսագրերի առկայություն» ծառայությունը

- ❖ 2020 թ. հոկտեմբեր ամսից իրականացվել են գործողություններ պատերազմից տուժած երեխաներին աջակցելու նպատակով, սակայն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն առանձին վիճակագրություն աջակցություն ստացած անձանց վերաբերյալ չի վարել: Սա խնդրահարույց է, քանի որ անհասկանալի է, թե նախարարությունն առնվազն այս մասով ինչպես է ապահովում կատարված միջոցառումների գնահատումը:

Մտահոգիչ է պատերազմի մասնակիցների և նրանց հարազատների նկատմամբ պետության վերաբերմունքը՝ նրանց տարբեր բյուրոկրատական խնդիրների առաջ կանգնեցնելով և այդպիսով արժանապատվությունը չհարգելով, որն անխուսափելիորեն կհանգեցնի նրանց հոգեբանորեն վնասելուն:

Հայաստանում հոգեբանական աջակցության ապահովումը բարդ է նաև պայմանավորված հոգեբանական աջակցության դիմելու մշակույթի բացակայությամբ, առկա կարծրատիպային մտածողությամբ: Այս առումով օրակարգային է ինչպես ակտիվ աշխատանքների իրականացումն այդ կարծրատիպերը հաղթահարելու ուղղությամբ, այնպես էլ աջակցության կարիք ունեցող անձանց հայտնաբերումն ու նրանց համար ծառայությունների հասանելիության ապահովումը:

Ելնելով բնականոն կյանքի կառուցման տեսանկյունից հոգեբանական վերականգնողական աշխատանքների կենսական կարևորությունից՝ հոգեբանական աջակցությունն անհրաժեշտ ծավալով և ժամանակով պետք է հասանելի լինի դրա կարիքն ունեցող անձանց: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է

- ապահովել որոշման համար հիմք հանդիսացած գնահատումների և հիմնավորումների հրապարակայնությունը, մասնավորապես՝ քանի անձ, որ մարզից, ինչ տարիքային խմբի է ծրագրի թիրախ
- երաշխավորել կատարված աշխատանքների, ընտրված գործիքակազմի, դրանց արդյունավետության գնահատում, ծրագրի արդյունքների վերաբերյալ հաշվետվողականություն և թափանցիկություն՝ հանրությանը ներկայացնելով կարիքի և աջակցություն ստացած անձանց վերաբերյալ հնարավորինս համապարփակ տվյալներ
- ապահովել ծրագրի շարունակականությունը՝ օգտագործելով նաև պատերազմի մասնակիցների և նրանց հարազատների հետ աշխատանքներ կատարող անհատների և հասարակական

նախաձեռնությունների ներուժը՝ ցուցաբերելով համակարգային և համալիր մոտեցում

- ապահովել հոգեբանական աջակցության կարիք ունեցող բոլոր անձանց հայտնաբերումը և ծառայությունների հասանելիությունը նրանց համար
- ապահովել մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը՝ օգտագործելով նաև միջազգային փորձագետների ներուժը
- ապահովել հոգեկան առողջության ոլորտի բոլոր իրավասուների, այդ թվում՝ հոգեբուժական հաստատությունների իրազեկվածությունը ծրագրին և մշակել համագործակցության մեխանիզմ
- ապահովել հանրության հոգեբանական վերականգնման ինչպես թիրախային, այնպես էլ համալիր միջոցառումների իրականացումը, այդ թվում՝ հոգեկան առողջության վերականգնմանն ուղղված տեսաշարերի պատրաստումն ու լայն տարածումը
- ապահովել սոցիալական, առողջապահական և այլ ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը, զերծ պահելով պատերազմի մասնակիցներին բյուրոկրատական քաշքշուկներից
- երաշխավորել պատերազմի մասնակիցների, այդ թվում՝ գերությունից վերադարձած անձանց ընտանիքների անդամներին որակյալ և հիմնավոր առողջապահական, այդ թվում՝ հոգեբանական վերականգնում և բարեկեցության համար բավարար կենսամակարդակ: